ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 23 >> սեպտեմբերի 2013թվականի N 96 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ 10 ՇԵՆՔ № 50/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՐԹԱԿԸ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 3,39 (ԵՐԵՔ ԱՄԲՈՂՋ ԵՐԵՍՈՒՆԻՆԸ) ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գարեգին Նժդեհի փողոց 10 շենք № 50/1 հասցեում գտնվող 3,39 (երեք ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հարթակը ապօրինի կառուցվել է քաղաքացի Զոյա Ադամյանի կողմից, որը գրանցվել է Գյումրի համայնքի սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման № 09042013-08-0034 վկայական):

Քաղաքացի Զոյա Ադամյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին (դիմումը գրանցված է քաղաքապետարանում 2013 թվականի հունիսի 26-ին, №-3702), Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գարեգին Նժդեհի փողոց 10 շենք № 50/1 հասցեում գտնվող 3,39 (երեք ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հարթակը և կառուցապատման ու սպասարկման համար փաստացի զբաղեցրած հողամասը վարձակալելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 34-րդ կետի „զ” ենթակետի՝ **համայնքի ավագանին որոշում է**.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գարեգին Նժդեհի փողոց 10 շենք № 50/1 հասցեում գտնվող 3,39 (երեք ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հարթակը և զբաղեցրած հողամասը 20 (քսան) տարի ժամկետով վարձակալության տրամադրել Զոյա Ադամյանին:
2. Վարձավճարի գին սահմանել տարեկան 10170 (տաս հազար հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:
3. Հանձնարարել քաղաքապետարանի բյուջեի եկամուտների հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կնքելու գույքի վարձակալության պայմանագիր:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Զոյա Ադամյանի միջոցների հաշվին:

Կողմ (18) Դեմ(0) Ձեռնպահ(0)

Ա.Ադամյան_____

Ա.Բաղեյան _____

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան_____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան_____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ.Խաչատրյան_____

Հ.Կարապետյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Ն.Մեսրոպյան_____

Ռ.Մխիթարյան_____

Վ.Շիրինյան_____

Է.Մկրտչյան_____

Ե.Պողոսյան_____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2013թ. սեպտեմբերի 23

ք.Գյումրի